13. ՀՈՐՈՐԴԻՆ Ո՞ՐՆ Է

Կէղնի-չէղնի, մեկ թուճար կէղնի։ Էդ զանկին թուճարին մեկ տղեմ՝ կէղնի։ Թուճար կը մեռնի, քենիմ՝ տարի հ՝ետև կնիկ լե կը մեռնի։

Թուճարի տղեն կը նստի ուր պապու դուքան, ուր առուտուր կէնա։

Օրմ՝ լե էդ զանկին թուճարի հ՝ընկերտանք հ՝իրարու մեջ բաս կէնին.

— Ամոտ չէ մըզի օր մըր հ՝ընկեր մեռավ, ուր տղեն չը կարգեց։ Խըլխ մըզի կը մեխտրին։ Արեք էրտանք, տղին ըսինք, վիր աղջիկ կուզա։ էն աղջիկ հ՝ուզինք։

Իրմլա ըսելով էկան տղի մոտ, ըսին.—Տղա՛, կը կարգվիս, վիր աղջիկ կուզիս, էրտանք, քըզի հ՝ապով հ՝ուզինք։

Տղեն ըսեց.— Չը կարգվիմ։

Թուճրներ զոր էրին տղի վրեն։

Տղեն ա, ըսեց.— Ընձի հըմալ աղջիկ մը պըտի հ՝ուզիք օր, տարին մեկ հաղ էրտամ ընդրա մոտ։

Ըսին.—Հըմալ աղջիկ հ՝ու՞սա գտնինք։

Ըսեց.— Ես չը կարգվիմ, օր կարդվա, հըմալ աղջիկ կուզիմ։

Տեսան տղեն կարգվելու միտք չունի։

— Քելեք էրտանք,— ըսին։

Էմլե ըսին, ըդրա պապ մըր հ՝ընկերն ա, էրտանք ժուռ գանք, Կէղնի օր գտնինք։ Ընկան ճամբա գացին, հասան մեկ դեղ։

Գեղացիք հարցուցին.— Ինչի՛ իք էկեր։

Ըսին.— էկեր ինք աղջիկ հ՝ուզինք մըր տղին։

Ըսին.— Բարի իք էկեր։

Ըսին.— Մըզի մեկ խոսք կա, խայիլ կէղնիք, կը տանինք։ Մեր տղեն տարին մեկ հաղ պըտի էրտա աղչկա մոտ։

Գացին աղչկան ըսին, աղչիկ ըսեց.—Ես հըմալ իրիկ ի՞ն, էնիմ օր։

Թուճարներ հ՚ելան, գացին ուրիշ տեղեր. գեղ մի մտան, մեծ տուն մի տեսան։ Տեսան օր ի՞նչ տեսնին. ամեկ մարդ գիրք մի առի ուր ձեռ ու կը կարդա. աղչիկ մ՚էլ առեր է ահագին Աստվածաշունչ մի՛ ձեռ, նստի փանճարեն շուշուտ կը կարդա։

Թուճարներ ըսին.—Հ՚ըկըր հ՚ուզինք իդա աղչկան՝ էդ ա, հ՚ըկըր չուզինք՝ էլ չկա։

Գացին աղչկան ըսին։ Աղչիկ ըսեց.— Ելե էդ հըմալ բան կուզենք աստծուց, օր իմ էրիկ տարին հաղ մի մոտս հ՚իգա։

Թուճարներ նշան դրեցին։ Ջէդ աղչիկ բերեցին, տղեն կարդեցին։

Տղեն խալայեխ մի բռնեց, դրեց էդ աղչկա կուշտ, ինչ էղած չէղածը տվեց ուրան, ուր կնկան հ՚ակյար բան մը կը պակսեր, ջառին կօղորկեր, բերել կիտար։

Տղեն առուտուր կէներ։

Էրկու տարի հ՚ընցավ։ Էդոր էրկու տղա էղավ։ Մեկ օր մեկ յահուտի ըղոնց բանը հ՚իմցավ։ Ու օրմ հ՚իրիկվան դեմ գնաց տղի դուքան, ըսեց.

— Քու շորեր տուր, հ՚ըսօր հ՚իրիկուն կէրտամ հարսնիք, վաղը սապախտան կը բերիմ կիտամ։

— Կայնի,— ըսեց յահուտուն,— էրտամ ուրիշ շոր բերիմ, հաղի գնա։

Յահուտին լավեց.— Քու շորեր տո՛ւր, ես էրտամ։

Օր շատ լավեց, հանեց, տվեց։ Էդի հագավ, շիտակ գնաց էդ թուճարի տղի դուռ ղարկեց։ Ջառեն էկավ հարցուց.— Էդի ո՞րն ա։

Ըսեց.— Ես իմ, դուռ բա՛ց։

Ջառեն գնաց խաթունին ըսեց.— Աղեն ա, դուռ կը ղարկա։

— Է՛,— ըսեց,— հ՚ուր ա, դըռ աղի վաղտեն չթմեր ա, հըլա ամիս մը լե կա. է՛, գնա՛, բա՛ց, կէղնի օր գործի հ՚ապով է էկի։

Ջառեն գնաց, դուռ բացեց, աղեն էկավ, փշումի զրուցեց, ըսեց.— Ընձի հ՚ըսօր քեֆ չկա, իմ տեղ թալեք, ես կը պառկիմ։

Տեղ թալեցին, պառկավ։ Առավոտուն հ՚ելավ, լուսմթին գնաց։

Ջառեն ըսեց.— Խանըմ, հ՚ընչի աղեն հըմալ մռութ կախ էր։

Ըսեց.— Չը գինամ։

Յահուտին սապախտան շուտ գնաց դուքան, շորեր հանեց, շնորհակալ էղավ։

Էդ տղի ուր տուն գնալու վաղար էկավ։ Գնաց դուռ զարկեց։

Ջառին էկավ, հարցուց։ Գնաց ուր խաթունին ըսեց.— Աղեն էկավ։

Խաթուն հեռստավ, թե.— Էդ մարդ էն հ'առչի օր էկավ, խո հ'ըմնօր չգա։ Գնա՛, բաց, հ'ընչի օր, ուրիշ բանի հ'ապով էկած կէղնի։

Ջառին գնաց դուռ բացեց։ Աղեն էկավ տուն, եմիշ բերեր էր։ Տվեց խաթուն, ըսեց.—Դու հ'որի՞ն էրկու հաղ դիգաս, հ'ըմնօր պտի ղա՞ս։

— Ի՞նչ հ'ըմնօր,— ըսեց թուճար։

— Ըպա էս շաբաթ մը չկա օր էկար։

— Կնի՛կ,— ըսեց,— չըմ դինա, դու ծռեր իս, ահա տարին թմավ, նո՞ր ես էկա։

— Ըպա, էն ո՞րն էր էկավ քու շորերով, քու պեսն էր։

— Վա՜խ, էդ ինչ բան էր էղավ,— ըսեց տղեն։— Կնի՛կ,— ըսեց,— ես կը մեռնիմ։ Օր ընձի իրեք տղա էղավ, մեկ պըտի դեդեմահրում հանիս տնեն։

Տղեն կսկծու մեռավ։ Կնիկ չը դիներ թե հ'որի՞ հ'ըմալ ըսեց։

Վախտ մը հ'ընցավ։ Կնիկ պարկավ, տղեմ լե բերեց։

Էդի էդ տղեկներ շոշըցուց։ Հ'ելավ գնաց մեկել թուճարի մոտ, ըսեց.

— Էն վախտն օր քու աղբեր մեռավ, ընձի թարիֆ էնեց. «Ընձի իրեք տղա էղավ, մեկը պետք ա տնեն դեդեմահրում հ'ելնի»։

Թուճարը իրեք տղեկներ լե բերեց ուր մոտ ու ըսեց.—Ես ո՛ր մեկ մահրում հանիմ՝ հ'ըմեն լե ուր հոր ու մոր կը մնին։ Ես չըմ կրնա։ Վաղ իրեք լե կը ճանբիմ թագավորի մոտ, թագավոր մեկ դեդեմահրում հանա, էն մեկել էրկուս գան ուրանց տուն։

Էդ թուճար ճանբու դրեց.— Դուք գացե՛ք։— ըսեց,—ես գիգամ։

Իրեք աղբերներ հ'իրարու հետ խաղալով ճամբեն կէրտային։ Մեկ լե տեսնես, պզտիկ աղբեր ըսեց.

— Աղբրտիք, կը տեսնաք, հ'իդա ճամբով մեկ դեվեմ էկեր ա։ Թոփալ էղե, մեկ աչքն էլ քոռ էղե, հ'ակռեն լե կոտռուկ ա էղե, դեվի բեռ լե էրկու թայ, մեկ եղ ա էլե, մեկ թայ՝ մեղը։

Աղբրտիք էդ աղբոր խոսքերու վրեն ծիծղալով կէրտային, մեկ լե կը տեսնին օր աճամ մի վաղնելով գիգա։ Էդ տղեկներուց կը հարցու.

— Տղեկնե՛ր, էդ ճամբով դեվա հ՚ընցավ, տեսաք, ի՚մալ էր։

Պզտիկ տղեն ա, ասեց.— Հ՚որի՞ն ես չըմ դինա. թոփալ էր, մեկ աչք քոռ էր, մեկ ակռեն լե կոտրուկ էր, վրեն էրկու թայ կար, մեկ թայը մեղր էր, մեկ թայը՝ եղ։

— Է՛, ապրիս դու տղա. հ՚ուր ա, հ՚ուր գնաց։

Ես ի՞նչ դինամ։

— Ի՞մալ թե, ես ի՚նչ դինամ։ Դու էղած չէղածը կը պատմիս, կըսիս՝ «Չըմ դինա»։

Մեկ դոմբ տղի պառեկին կը ղարկա։

Իրեք աղբերներ հեռոտելով կհ՚ընկնին աճմու վրեն, կուշտ մը կը ծեծին, աճամ կըսա.— Քելեք էրտանք գանգատ, թե չէ, ձըղնե կառնիմ իմ դևեն ու ապրանքներ։

Հ՚ելան գացին թագավորի մոտ։

Աճամ թագավորին ըսեց.— Թագավոր ապրած, հ՚իդա տղեն իմ դեի տեղ դինա, ինչ էղած, չէղածը դինա, ընձի ըսեց։ Ելե հարցուցի՝ «Հ՚ուրա», ըսեց՝ «Չըմ դինա»։ Ելե հեռոտա։ գոմբ մը ղարկի։ Իրեք աղբեր լե մեկ էլան, թափան իմ վրեն, ընձի ծեծեցին։ Կը խնգրիմ քըղնե, իմ դևեն առնիս իդրնե։

Թագավոր խանչեց պզտիկ տղին.— Դու խեղճի դևեն հ՚ընչի՞ պահեր իս, չիտաս։

— Թագավոր ապրած,— ըսեց,— ես խապար չունիմ։

— Իմա՞լ խապար չունիս, օր էղած չէղած կը պատմիս։

— Թագավոր ապրած, մենք ճամբով գիգենք, ճամբու վրեն տեսա մե դեվայի դավս։ դեվայի օլոր-մոլոր քելելուց հանեցի օր թոփալ ա, աչք քոռ ա ընդով հանեցի, օր հ՚օտներ ճըպ ու ռաստ էր թալե, ակռի կոտրուկ էդնել հանեցի կանչընեերուց, ո՞ր տեղն օր բերան զարկեր էր, մեկ ակռի տեղ կանանչ հ՚երկեն մնացեր էր։

— Ըպա ի՞նչ դիներ դու ըդրա բեռը մեկ թայը եղ էր, մեկը՝ մեղր։

— Թագավոր ապրած, ճամբու մեկ թարաֆը մժիկ էն լցված, հանեցի օր էն թարավի թայ եղ էր, մեկել թարավը ճանճ են քոմած, ընդրնե լե հանեցի, էն թարավի թայը մեղր էր։

— Աճա՛մ, դու կըսեր տղեն ա գողցե, տեսա՞ր, ինչ կըսա։

Աճամ հեռեցավ գնաց։

Մեկել օր, թագավորի տոնի օրն ա, ինչ օր աղքատ զանկին մարդ կեր, լցվան թագավորի դիվան, օր քեյֆ էնին։ Էդ իրեք աղբըրտիք լե գացին, էն տեղ նստան։ Եբոր գինի խմեցին, պզտիկ տը-

զեն ըսեց.—Աղբրտիք, իդա գինուց արնի հոտ գիգա։— Եբօր եմակ լե բերին, ըսեց.— Իդա մսից ջան հոտ դիգա։

Եբօր կերան լմնցավ, ըսեց էլման.—Աղբրտիք, դինա՛ք, իդա թագավոր բիճ ա։

Դու մի ըսի, թագավոր ըդոնց էտև նստեր ա, ըդոնց ըսած հ՚ա-կանջ կէնա։

Եբօր ամեն մարդ ուր բանին գնաց, թագավոր էդ իրեք աղբրր-ներ խանչեց, ըսեց պղտիկ տղին.— Դու ի՛նչ գինաս թագավորի գի-նու մեջ արուն կա։

— Օղո՛րթ ա, արուն կա,—ըսեց,— գնա քու գինի շքողի վրեն դիր, ղոռա, տես ի՛նչ կըսա։

Թագավորը գինի շիքողին բերեց, ըսեց.— Արի՛, օղորթն ըսա, իդա գինու մեջ արուն լըցեր իս։

Գինի շիքողն ըսեց.— Թագավոր սաղ կենա, եբօր խաղող քա-ղեցի, օտքերս հանեցի, հ՚ընկա մեջ օր կոխրճենք, ղու մըսի, իմ դանակ իմ դոտուցեն պատի տաշտի մեջ, զիմ օտք կտռեր ա, չըրի հ՚իմցա, կեր մեկ թաս արուն խառնվավ խաղողի հետ։

— Է՛, պղտիկ տղա, դու ի՞նչ դինաս թագավորի կերած մըսի մեջ շան միս էղնի։

Տղեն ըսեց.— Գնա՛, քու խասպուց հարցու, օր իմ ըսածը չե-լավ, իմ գլուխը զարկ։

Թագավորը ուր խասպուն խանչեց, ըսեց.— Օղորթն ըսա՛։

Խասապն օղորթը չըսա, կանչին օր հ՚երդվի, կըսա.— Ես մեկ կով ունենք, էն կով ծնավ, հորթիկ մի բերեց. շաբաթ մի քշեց, չքըշեց, կով փիցավ։ Մըր տուն մեկ գել մի կար, օր նոր էր ցռտե. ամեն օր հորթիկ կը տանենք, դիլուն հաց ու լակ կուտայի, օր թո-ղեր, օր հորթիկ ծծեր։ Էդ հ՚ըմալ հորթիկ մեծցուցի, էնեցի էրինչ, էդ միսն էր։

— Է՞, տղա՛, դու ի՞նչ դինաս թագավոր բիճ ա։

— Թագավոր ապրած, գնա զոռ դիր քու մամու վրեն։

Թագավոր կը խանչա զուր մեր, կըսա.— Օղորթ ըսա՛, ես բիճ իմ թե չէ, օր չըսիս, զքու գլուխ կը զարկիմ։

Կըսա.— Լա՞ռ, ի՞նչ պահիմ, ֆլան տարին քու պապ գնաց կռիվ։ Էրկու տարի չէկավ։ Ես ֆլան վաղրի հետ տվի, առի։

Թագավորը տեսավ պղտի տղի ըսածներ օղորթ ին, ըսեց.— Դու ի՛նչ գործով իք էկեր իք իդա տեղ։

Ըսեց.— Էկեր ինք իդա տեղ մզնե մեկ դեղեմահրում հանես։

Թագավորը ըսեց.— Ես ո՛ր մեկդ հանեմ, իրեքդ լե մեկ տեսակ իր։ Ըսոր հանիս չէղնի, ընոր հանիմ, չէղնի։ Դուշուրմիշ էղավ։

Թագավորի աղջիկ տեսավ պապու նիաթ կախ, հարցուց.— Հ՝ընչի՞ բու նիաթ կախեր իս։

Ըսեց.— Ես չը կախեմ։ ո՞ր կախա. ես մեկ թագավոր, չը կրոնամ իդա տղեկներուց մեկ դեղեմահրում հանեմ։

— Է՛, էդ լե բա՞ն ա, տե՛ս, իմալ հանիմ,— ըսեց աղջիկ։

Աղջիկ տղեկներուն կը ասնա մեկ հ՝օդա, կըսա.—Դե նստեք, տղեկներ, մեկ հեքիաթ ըսիմ։—Ժամանակով մեկ տղա կը ծռի վազիրի աղջկա վրեն, ինչ կէնա չէնա, ուրին չի տան, ուրիշ մարդու մի կիտան, օր մի, աղջիկ կելնի կէրտա ուրանց պաղչեն պտըտելու։ Տղեն կը տեսնի օր հանդա, աղջիկ գնաց պաղչեն։ Կէրտա պատնից ուրին կը թալա ներս, կէրտա աղջկա մոտ։ Աղջիկ օր կը տեսնի տղին, կըսա. «Մկա դնա, եբոր ընձի տարան մարդու, էն հ՝առջի գիշեր դամ քու մոտ»։ Շատ աղեկ, կըսա ու կը հեռենա։

Աղջկա կարգվելու վախտը դիգա, կը տանին ուր նշանլվի տուն։ Աղջիկ իր նշանլվին կըսա.— Ես հ՝ըսօր գիշեր կէրտամ ֆլան մարդու մոտ, ընդրան խոսք տվեր իմ։

— Դե, գնա, վաղ սապախտան շուտ արի, մարդ չը տեսնա։

Աղջիկը կէրաա, էդ տղի դուռ կը զարկա, տղեն կելնա դուռ կը բանա։ Կը տեսնա օր վազիրի աղջիկն ա, կըսա. «Դու օր էկար քու խոսքի հետ, քու իրիկ լե օր թորկեց, գնա, չուր ի դատաստան իմ բուրն իս»։

— Է,— կըսա թագավորի աղջիկ իրեք աղբոր,— հասկըցա՞ք։

— Հա՛,— կըսին։

Մեծ աղբոր կըսա.— Դու էն տղի տեղ էղներ, ի՞նչ պտի էներ։

— Քենիմ հըլղաթ տենք, պըտի տանենք ուր նշանլուի մոտ, պըտի ըսենք. «Իմ մերս ա, իմ քուրս ա»։

Օրթանճի աղբոր ըսեց.— Դու էն տղի տեղ էղներ, ի՞նչ պըտի էներ։

— Պըտի տանենք ուր իրկա մոտ, հալալուտեն հ՝ուզենք։

— Է՛, պզտիկ աղբեր, դուն տղի տեղ էղներ, ի՞նչ պըտի էներ. կը թորկե՞ր հ՝առջի գիշեր քու կնիկ էրթեր հ՝ուրիշի մոտ։

— Ընդրա հոր գանդ կանիծենք, կը թորկենք էրտեր ուրիշի մո՞տ։

— Է՛, տղա, դու դեղեմահրում պտի հ՝ելնիս։ Ընդոնք կէրտան ուրանց հոր տուն, դու հորորդի չիս։